

## Ս. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ, Հայերենի ուղղագրության պատմություն,

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1973, 431 էջ

Ս. Գյուլբուդյանի սույն մենագրությունը ամփոփում է հայերենի ուղղագրության բազմադարյա պատմությունը՝ գրերի գյուտին անմիջապես հարող շրջանից մինչև մեր օրերը, որն ընդգրկում է ավելի քան 1500-ամյա մի ժամանակաշրջան։ Աշխատությունը բաղկացած է չորս գլխից։ Առաջին գլխում ներկայացվում է Ե—Թ, երկրորդում՝ Ժ—Ժէ, երրորդում՝ ԺԸ—ԺԹ դդ. և չորրորդում՝ XX դ. հայերենի ուղղագրությունը։ Ըստ որում, Ե—Թ և Ժ—Ժէ դդ. հայերենի ուղղագրության հարցերը բացառապես քննվում են ձեռագիր մատենագրության և վիժագիր արձանագրությունների ընձեռած նյութերի հիման վրա, իսկ Ժէ և հետագա դարերի համար հեղինակն օգտագործում է հայերեն տպագիր գրականությունը։

Առաջին երկու գլուխներում քննությունը հիմնականում տարվում է բաղաձայնների, ձայնավորների, երկբարբառների ուղղագրության և դրանց շեղումների, տառադարձության, համառոտագրության, մեծատառի կիրառության, տողադարձի և այլ հարցերի ուղղութիւնով։ Մյուս երկու գլուխներում արդեն հիշյալ խնդիրների քննությանը զուգընթաց արծարծվում են XIX և XX դդ. հայերենի ուղղագրության հարցերի վերաբերյալ բոլոր քիչ թե շատ արժանի բանավեճերը, ուղղագրության բարեփոխման նախագծերը, որոշումները և այլն։

Հայերենի Ե—Թ դարերի բաղաձայնական և ձայնավորների համակարգն ու դրանց ուղղագրությունը քննելով ըստ ձեռագիր և վիժագիր հուշարձանների, նկատի առնելով նաև այդ հարցում Ա. Մեյի, Ն. Ադնեցի, Հ. Աճառյանի, Է. Աղայանի և ուրիշների կարծիքները, հեղինակը հաստատում է, որ այդ դարերի ուղղագրությունը գերազանցապես հնչյունային է եղել, իսկ գրության հիմունքը՝ յուրաքանչյուր հնչյունին մեկ տառ և յուրաքանչյուր տառ մեկ հնչյունի համար սկզբունքը։

Որոշակի արժեք են ներկայացնում այն բոլոր շեղումները, որ հեղինակը քաղել է այդ դարերի մատենագրական հուշարձանների հնագույն ընդօրինակություններից և վիժագիր արձանագրություններից։ Աշխատության մեջ ըստ դարերի ներկայացվում և մեկնաբանվում են վ և Վ, յ և Յ, ն և Ն հնչյունների ուղղագրության շփոթման, բառավերջում յ-ի անկման հետաքրքրական փաստերը, ինչպես նաև ալ, ուլ, եւ, իւ, եա, ուա, ուփ, ուն երկբարբառների հնչման և գրության իրողությունները։ Հատուկ ուշադրության են արժանացել այդ դարերում օտարազգի բառերի հայերեն տառադարձության օրինակափությունները, մեծատառի, տողադարձի և համառոտագրության հարցերը։

Ժ—Ժէ դդ. ուղղագրությունը ներկայացնելիս, հիմնվելով հատկապես Յ. Կարստի, Հ. Աճառյանի, Ս. Ղազարյանի, Հ. Մուրադյանի կողմից բացահայտված միջին հայերենի հնչյունական համակարգի օրինակափությունների վրա, հեղինակը նկատում է, որ արտասանությունը գրությունից զգալիորեն հեռանալու կապակցությամբ, իբրև ընդհանուր երևույթ, ձայնորդներին և ձայնավորներին հաջորդող դիրքերում ք, գ, դ, ձ, ջ հնչյունները հնչվում են փ, ք, ք, գ, շ այսինքն՝ շնչեղանում են, թեև հիմնականում պահպանվում է դրանց դասական գրությունը։ Գյուլբուդյանը միաժամանակ ներկայացնելով դասական գրության շեղումները, հարուստ փաստերով ցույց է տալիս, որ միջին հայերենում ուա, ուփ, ուն, ուն երկբարբառները արտասանվում են՝ վա, վի, վն, վո, որի հետևանքով Ս հնչյունը արտահայտվում է ու, վ, լ տառերով։ Այդ մեկ հնչյունը երեք տարբեր գրերով արտահայտելն էլ, ըստ հեղինակի, պատճառ է դառնում մի շարք շեղումների և սխալ գրությունների։ Նա հաստատում է, որ այդ շրջանում ալ երկբարբառը վերջնականապես վերածվում է օ ձայնավոր հնչյունի և գրության մեջ միայն օ հնչյունն արտահայտվում է ալ, ո և օ տառերով, իսկ ավելի ուշ՝ ալ-ը դուրս ընկնելով, այդ հնչյունի համար մնում են ո և օ տառերը։

Անդրադառնալով Ե, է տառերին, Գյուլբուդյանը նշում է, որ դրանց գրությունը մինչև ԺԶ գ. խառն է եղել, իսկ հետագայում, երբ Ե-ն սկսում է չհնչել, արդեն որոշակի են դառ-

նում այդ տառերի դրույթյան սահմանները Այդ շրջանում նկատելի են դառնում նաև ը-ի դրույթյան դժայի շեղումները, որոնք արտահայտվում են բառամիջում այդ տառի գրույթյան ձգտումով:

Գրքում բերված փաստերը վկայում են, որ Ժ—Ժէ դդ. առաջին հերթին փոփոխվում է հայերենի ուղղագրությունը՝ հատկապես Հայաստանի արեւմտյան հատվածում: Բաղաձայնական համակարգի փոփոխման հետևանքով գրվելի շեղումներ են կատարվում դասական տառագարձությունից, օտարադգի խուլ հնչյուններն արտահայտվում են շնչել հնչույթների տառերով, իսկ ձայնեղները՝ խուլերով: Այսպիսով, հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածներում ստեղծված երկու տարբեր տառագարձությունները փաստորեն նախորդում են ապագայում աշխարհաբարի դրական երկու տարբերակների առաջացմանը: Հետաքրքրական է, որ այդ նույն շրջանում Արիստակես Գրիլը (ԺԲ դ.) սահմանում է յ տառի ուղղագրությունը, իսկ Գևորգ Սկեռացին (ԺԳ դ.)՝ տողագրածի կանոնները, բայց դրանք մինչև ուշ միջնադար չեն կիրառվում:

Աշխատանքում ավելի հանգամանորեն է ներկայացված XIX դ. ուղղագրության վիճակը: Հեղինակը անդադարձել է անցյալ դարի ուղղագրական բանավեճերին, որոնք ծավալվեցին ինչպես նախորդ դարերում դասական ուղղագրության մեջ կատարված շեղումների, այնպես էլ դրական լեզվի երկու տարբերակների արդեն գոյակցման հետևանքով առաջացած ուղղագրական նոր անհամապատասխանությունների կարգավորման նպատակով: Բանավեճերը ծավալվում էին թե՛ սկզբունքային և թե՛ ուղղագրության մասնավոր հարցերի շուրջ: Հատուկ ընթացք է ստանում Վ, Վ, ու դրույթյանը նվիրված վեճը, այսպես կոչված, վեճագրության և հյունագրության կողմնակիցների միջև:

Գնահատելիս այն է, որ հեղինակը այս բաժնում ոչ միայն օբյեկտիվորեն արձանագրում է XIX դ. ուղղագրության վիճակը, այլև ըստ տասնամյակների ներկայացնում և մեկնաբանում է տարբեր հարցերի շուրջ սկիզբ առած բոլոր բանավեճերը: Աշխատության մեջ բերված փաստերը վկայում են, որ այդ շրջանում գրաբարյան գրականությունը, Մխիթարյան հրատարակության մեջ տեսնող մամուլը գրականությունը, բառարանագրությունը, մի շարք պարբերականներ և այլն հետևում էին ավանդական ուղղագրությանը: Մյուս կողմից, մի քանի սկզբունք գոյություն ունեցող տառերի դրույթյան նկատմամբ: Այսպես, Վ, Վ, ու դրույթյան ժամանակ ոմանք (Ա. Այսրենյան, Ա. Բագրատունի, Գ. Ալվաղովսկի և ուրիշներ) պահպանում էին հիմնականում ավանդական գրությունը. ըստ որում՝ Ա. Բագրատունին պահպանում էր միայն բաղաձայնական Վ-ն, Ա. Այսրենյանը և ուրիշներ երբեմն Վ-ի փոխարեն գրում էին Վ տառը: Ոմանք էլ (Գ. Ավետիսյան, Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան և ուրիշներ) հետևելով հնչյունային դրույթյանը՝ կրավորական բայերում և ժողովրդա-խոսակցական ձևերում բաղաձայնական Վ-ի փոխարեն օգտագործում էին Վ տառը, մնացած դեպքերում՝ Վ կամ Վ:

Արևմտահայերենում ավելի մեծ ծավալ է ստանում հնչյունափոխությունից առաջացած գաղտնավանի ը-ի դրույթությունը, որ սկսվել էր դեռ միջին դարերում: Ժամանակի գրական հուշարձաններից, առանձին հեղինակների գործերից, պարբերական մամուլից, լեզվաբանական ուսումնասիրություններից բերվող բազմաթիվ փաստերի հիման վրա քննվում են նաև այդ հարցերը:

Աշխատության մեջ ներկայացված են XIX դ. 50-ական թվականներին Ն. Ռուսինյանի, 60-ական թվականներին Ստ. Ստեփանյանի, 80—90-ական թվականներին Դ. Աղայանի կողմից հայերենի ավանդական ուղղագրության վերափոխման կամ առանձին հարցերի վերանայման կապակցությամբ առաջ քաշված նախագծերի և տարբեր առաջարկությունների վերաբերյալ ծավալված բանավեճերը, որոնց մասնակցում են արևելահայ և արևմտահայ մտավորականության տասնյակ ներկայացուցիչներ, անգամ օտարադգի հայագետներ: Ինչպես և սպասվում էր, մերժվում են ոչ միայն ուղղագրության վերափոխման այդ նախագծերը, այլև հայ հասարակայնությունը դեռ է արտահայտվում նաև ուղղագրության առանձին հարցերի վերանայման այլ առաջարկներին, և դրանցում նախատեսված բարեփոխումները տեղ չեն գտնում ո՛չ դասագրքերում և ո՛չ էլ պաշտոնական գրագրության մեջ:

Անդրադառնալով հիշյալ թվականների տառագարձության հարցերին և այդ առիթով ծավալված վեճերին, հեղինակը նկատում է, որ այդ խնդրում արևելահայ և արևմտահայ հատվածները փաստորեն երկու տարբեր սկզբունքներով են առաջնորդվում: Եթե արևելահայերենում գործում է ավանդական տառագարձությունը, ապա արևմտահայերենում միայն դասական գրականության մեջ եղած փոխառյալ անունների ուղղագրությունն է պահպանվում նույնությամբ, իսկ նոր փոխառություններում այլ կարգի բառերը տառագարձվում են ըստ փոխատու լեզվի:



Հնչման և արևմտահայերենի բաղաձայնական խլաղուրկ համակարգի օրինաչափությունների: Գրախոսվող գրքի հեղինակն իրավացիորեն գտնում է, որ այդ շրջանում ուղղագրությունը կարգավորող, միասնական կանոններ մշակող պետական մարմնի բացակայության պայմաններում տարբերային (մենք կավելացնենք նաև քառասյին) վիճակից գուրս դալու միակ փրկությունը ավանդական ուղղագրության պահպանումն էր (էջ 234):

Նախորդ շրջանների համեմատությամբ ավելի ընդարձակ է ներկայացված հայերենի ուղղագրությունը XX դ.: Այս բաժնում նույնպես քննության նյութ են դարձել հայերենի ուղղագրության հարցերին վերաբերող բանավեճերը, որոնք սկիզբ են առել դեռևս XIX դ.: Հեղինակը օրինակելիորեն ներկայացնում և ապա հանգամանորեն քննում ու մեկնաբանում է Մ. Աբեղյանի 1922 թ. ուղղագրական բարեփոխումը, արխիվային փաստաթղթերի հիման վրա ցույց տալիս այդ որոշումն ընդունելու հանգամանքները, բերում է բարեփոխման արձագանքները, նշում՝ հատկապես սփյուռքահայ մտավորականության բացասական վերաբերմունքը:

Ըստ արժանվույն գնահատելով 1940 թ. մասնակի ուղղագրության բարեփոխումը, Ս. Գյուլբուրադյանը այն կարծիքն է հայտնում, որ 1922 թ. ուղղագրական բարեփոխման համեմատ, իր ակնհայտ առավելություններով հանդերձ, արևմտահայերենի օրինաչափությունները ոչ լիովին հաղթի առնելու պատճառով այն նույնպես մերժվում է սփյուռքահայության մեծագույն մասի կողմից և փաստորեն չի կատարում հայ ժողովրդի հատվածներին ծառայելու իր անհրաժեշտ դերը:

Այս բաժնում հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձնում 30-ական թվականներից հետո Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր տեղի նախնական կոմիտեի գործունեությանը, լուսաբանում նրա կատարած կարևոր աշխատանքը հատկապես հայերենի ուղղագրության և տառադարձության միօրինականացման և վիճելի շատ հարցերի կարգավորման ուղղությամբ:

Հեղինակի կատարած աշխատանքը պատկերադրելու համար պետք է հիշել, որ հայերենագիտության մեջ առաջին անգամ ձևակերպվելով այս բնագավառի ուսումնասիրությանը, հեղինակը ստիպված է եղել հավաքելու հայ ձևագիր մատենագրության, վիճագիր արձանագրությունների և տպագիր գրականության ընձեռած հսկայական նյութը, հիրավի կատարելով ծանր ու դժվար աշխատանք:

Դժվարությունն այն է, որ ուղղագրական հարցերի քննությունը ներառում է ոչ միայն 1500-ամյա մի ամբողջ ժամանակաշրջան, այլև այն, որ քննության ենթակա շրջանը ընդգրկում է հայերենի որակապես տարբեր դրսևորումները՝ գրաբարը, միջին հայերենը, բարբառները, աշխարհաբարը՝ իր արևելահայ և արևմտահայ տարբերակներով: Նշենք, որ հեղինակը հաղթահարել է այդ դժվարությունը ևս:

Ներկայացնելով գրաբարի, միջին հայերենի, արևելահայ և արևմտահայ դրական տարբերակների ուղղագրության վիճակները՝ ձևագիր, վիճագիր և տպագիր հարուստ հուշարձանների հիման վրա, հեղինակը չի բավարարվել սոսկ փաստեր շարադրելով, այլ պատմական հայեցակետով մեկնաբանել և գնահատել է դրանք, հանգելով ընդունելի եզրակացությունների:

Աշխատության մյուս արժանիքը հեղինակի ընդունած շրջանաբաժանումն է, որը հիմնականում ճիշտ է արտացոլում հայերենի ուղղագրության պատմական զարգացումը: Ուղղագրական հարցերի յուրահատկությունները, ինչպես և ուղղագրության ավանդապահության և որոշ պահպանողականության պատճառով նրա պատմական շրջանաբաժանումը կարող է չհամընկնել հայերենի պատմության շրջանաբաժանման առանձին ենթափուլերի հետ: Այս հարցում թերևս կարելի է առարկել հեղինակին՝ XIX դ. հատվածի և XX դ. առաջին քսանամյակի, ավելի ճիշտ՝ մինչև 1922 թ. ուղղագրական բարեփոխման շրջանների առանձնացման կապակցությամբ: Հիշյալ շրջանները, մեր կարծիքով, իրենց բնույթով իրարից ոչ միայն լին տարբերվում, այլ, ընդհակառակը, իրար հաջորդող ժամանակագրական փուլերի շարունակությունն ու լրացումն են:

Պատշաճը հատուցելով հեղինակի ցանկությանը, աշխատությունը կատարյալ դարձնելու նպատակով մեծ թվով փաստական նյութի ներգրավման հարցում, այնուամենայնիվ, որոշ դեպքերում այն այնքան էլ չի նպաստում հիմնական խնդիրների լուսաբանմանը: Այսպես, ուղղագրական հարցերին նվիրված բանավեճերի բաժնում տեղ է, գտել նաև անհայտ հեղինակների այնքան էլ կարևորություն չունեցող առաջարկությունների և դիտողությունների մանրամասն քննարկումը:

Հեղինակը հանգամանորեն քննել է XX դ. ուղղագրության բոլոր վիճելի հարցերը, բարեփոխման նախագծերը, արևելահայերենի և արևմտահայերենի գործող ուղղագրության հիմնական տարբերությունները, բայց, ցավոք, գրքում չեն տրվում արևելահայերենի ժամանակակից

ուղղագրության հիմնական սկզբունքները, ինչպես այդ արված է XIX դ. հայերենի ուղղագրության համար:

Կարծում ենք ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության պատկերը ամբողջացնելու և վիճելի որոշ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ էր մասնակիորեն անդրադառնալ նաև արդի փուլում հայերենի ուղղախոսության հարցերին, թեև ուղղախոսության խնդիրը չի մտնում հեղինակի ուսումնասիրության շրջանակների մեջ:

Ուղղագրության հարցերը քննելու և լեզվի պատմության այս կամ այն շրջաններում նրա վիճակը ներկայացնելու նպատակով Ս. Գյուլբուդաղյանը իրավացիորեն որոշ դեպքերում դիմում է նաև ուղղագրական ձեռագիր և տպագիր բառարաններին: Գրքում, սակայն, պատշաճ ուշադրության չեն արժանացել հրատարակված մի շարք բառարաններ, որոնց գերը մեծ է եղել գրագիտության և ընդհանրապես խոսքի մշակույթի բարձրացման գործում: Անհրաժեշտ էր ավելի հանգամանորեն ներկայացնել և գնահատել 1922 թ. ուղղագրական մասնակի բարեփոխումից հետո լույս տեսած Ա. Ղարիբյանի ուղղագրական բառարանը, որ միայն 40-ական թվականներին երեք հրատարակություն է ունեցել և այնուհետև Ա. Ղարիբյանի և ուրիշների հեղինակակցությամբ բազմիցս վերահրատարակվել է հաջորդ տասնամյակներին: Հեղինակի ուշադրությունից, ըստ երևույթին, վրիպել է Ա. Աբեղյանի «Ուղղագրական բառարանը» (1913 թ.), որ պարունակում է 10 հազար բառ և Ն. Ալլավերդյանի «Նոր ուղղագրական բառարանը» (1930 թ.), որ լույս է տեսել 1922 թ. ուղղագրության բարեփոխման կապակցությամբ:

Մեր դիտողությունները բնավ չեն կարող ստվեր գցել գրախոսվող աշխատության արժանիքների վրա: Ս. Գյուլբուդաղյանի «Հայերենի ուղղագրության պատմությունը» արժեքավոր ներդրում է հայագիտության մեջ և ամբողջացնում է հայոց լեզվի պատմությունը. լրացնելով մինչև այժմ թափուր մնացած նրա ուղղագրության կարևոր բաժինը:

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բաճաթիբաղան գիտությունների դպրատուն